«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Դաստիարակ՝ Աշխեն Սիմոնյան

Մանկապարտեզ՝ «Այգեհովիտի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 5
Գլուխ 2 10
Եզրակացություն 13
Գրականության ցանկ 14

Ներածություն

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: [Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, -Եր. : 2010, էջ 208]

Ընտանիքի հետ իրականացվող ուղղակի կամ անուղղակի որևէ աշխատանքի նպատակը, բնականաբար, ծնողական հմտությունների զարգացումն է և ընտանիքի ջանքերն ի նպաստ երեխայի զարգացմանն ուղղելը: Երեխայի հետ իրականացվող զարգացման և կրթական աշխատանքը հատկապես արդյունավետ կլինի, եթե ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում ծնողներին տրամադրվի մանկավարժական խորհրդատվություն: [Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան,Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան, Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, 2020 թ, էջ 113]:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ նախադպրոցական կրթության բնագավառի ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցներն այսօր էլ հանդիսանում են երեխան, ծնողը և մանկավարժը, ուստի ուսումնադաստիարակչական աշխատանքների

արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է «երեխա – ծնող - մանկավարժ» եռանկյունու ակտիվ համագործակցությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- վերլուծել մանկավարժական անձնակազմի կողմից ծնողների հետ իրականացվող աշխատանքի կազմակերպման ձևերը և այդ ձևերի արդյունավետությունը:
- ուսումնասիրել և կիրառել ծնողների հետ իրականացվող աշխատանքի կազմակերպման նոր մեթոդներ:

Հետազոտական աշխատանքի վարկածն է՝ ծնողների հետ իրականացվող աշխատանքն առավել արդյունավետ և հասանելի կդառնա, եթե այդ աշխատանքի ընթացքում կիրառվեն տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Հետազոտական աշխատանքն իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Այգեհովիտի մանկապարտեզի այն սաների ծնողների հետ, որոնք ընդունվել են հաստատություն 2022-2023 ուսումնական տարվա սկզբին:

Նախապես կազմակերպվել է ծնողական ժողով, որի ընթացքում ծնողներին ներկայացվել է մանկապարտեզի մանկավարժական կազմը, հաստատության կանոնադրությունը, աշխատանքային գրաֆիկը, քննարկվել են տարբեր հարցեր:

Մանկապարտեզի աշխատանքի վերաբերյալ ծնողների իրական կարծիքը և առկա խնդիրները բացահայտելու նպատակով կազմակերպվել է էլեկտրոնային հարցում՝ անանուն տարբերակով: Այսպիսով փորձել ենք ապահովել հնարավորինս անկեղծ պատասխաններ:

Գլուխ 1. Տեսական մաս

1.1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական կրթական հաստատության փոխպայմանավորված մանկավարժական ներգործությունը:Նշված սոցիալական օղակների, հետևաբար և կրթադաստիարակչական համակարգերի մանկավարժական աշխատանքների միջև գոյություն ունեցող հաջորդականությունը կառուցվում է փոխներթափանցման սկզբունքով և ապահովում է երեխայի դաստիարակության և կրթության միասնականությունն ու անընդհատությունը: Նշված մանկավարժական համակարգերից յուրաքանչյուրին բնորոշ է յուրահատուկ մանկավարաժական ներգործություն և մի շարք ուսումնադաստիարակչական խնդիրների իրականացման ինքնատիպ ընթացք:

Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում: Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը, ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկությունները ու ձևավորվում բնավորության գծերը, դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր: Ընտանիքը մեծապես նպաստում է երեխայի ինքնահաստատմանը սոցիալական միջավայրում, նրա ստեղծագործական ներուժի և անհատականության բացահայտմանը: Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է, որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում: Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի և ընտանեկան դաստիարակության գերակայող դերը երեխայի դաստիարակության և նրա անձնավորության ձևավորման գործում:

Նախադպրոցական կրթօջախների հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում, նախադպրոցահասակ երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Մանկապարտեզում երեխան սկսում է հաղորդակցվել և

համագործակցել, որոշումներ կայացնել, համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ:

Ժամանակակից մանկավարժության կողմից առավել քան կարևորվում է «ընտանիք-մանկապարտեզ-դպրոց-համայնք» սոցիալական ինստիտուտների միջև համագործակցության նոր ձևերի մշակումը, փոխադարձ կապի և պատասխանատվության հաստատումը: Համագործակցության պայմաններում դրական փոփոխությունների են ենթարկվում «ծնող-երեխա-մանկավարժ» փոխհարաբերությունները, որոնք կրթական գործընթացի խթանման և դրա արդյունավետության հիմնական գործոններից մեկն է:

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքների շնորհիվ: [Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, էջ 114]:

1. 2 Նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի համագործակցության ձևերը

Հասմիկ Միտոյանի և Լալա Սմբատյանի կողմից առաջարկվել են մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր և արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղությունները՝

- շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- առավոտյան հանդիումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

- հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ իրականացվել են երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:
- գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:
- ացելություններ ընտանիք
- բաց դռների օրեր
- հարց ու պատասխանի ցերեկույթներ
- մանկավարժական հյուրասրահ
- գաղափարների տոնավաճառ
- վստահության հեռախոս
- բարի գործերի օր
- կլոր սեղան
- զրույցներ՝ անհատական և խմբային
- խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային
- անկետավորում
- երեխաների ընդհանուր նպատակային զննումներ
- փառատոներ և տոնակատարություններ
- սպորտային միջոցառումներ
- ցերեկույթներ

[Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, -Եր. : 2010, էջ 208-214]

Ընտանիքի հետ իրականացվող աշխատանքի ընթացքում ծնողներին տրամադրվող մանկավարժական խորհրդատվությունը ներառում է մի շարք կարևոր հարցեր.

- ❖ Անհրաժեշտ է օգնել ծնողներին հաշվի առնել երեխայի հոգեկան գործընթացների առանձնահատկությունները: Նրանք պետք է կարողանան կարևորել այն հանգամանքը, որ կարիք չկա անընդհատ համեմատելու

երեխային իր հասակակիցների հետ: Պետք է ծնողների համար հասանելի դարձնել այն միտքը, որ յուրաքանչյուր երեխա սովորում է իր անհատական առանձնահատկությունների (զգայությունների, հիշողության, ուշադրության, մտածողության, երևակայության, խոսքի) շրջանակում:

- Կարևոր է այն հանգամանքը, որ ծնողները հաշվի առնեն իրենց երեխայի հնարավորություններն ու զարգացման մակարդակը: Որևէ նոր հմտություն ձևավորելիս սկզբում անհրաժեշտ է օգտագործել պարզ և հեշտ առաջադրանքներ, աստիճանաբար բարձրացնելով դրանց բարդության մակարդակը:
- Անհրաժեշտ է ծնողների մոտ ձևավորել այն միտքը, որ պետք է հատուկ ուշադրություն հատկացնել երեխայի անգամ ամենաչնչին ձեռքբերումներին, խրախուսել երեխային նույնիսկ անհաջող փորձերի դեպքում և գովել՝ ամեն անգամ, երբ նա ունենում է որևէ նոր ձեռքբերում :
- Պետք է խոսել ծնողների հետ այն մասին, թե որքան կարևոր է հաշվի առնել երեխայի հետաքրքրությունները, քանզի այն, ինչ հետաքրքրական է, շուտ է յուրացվում:
- Անհրաժեշտ է օգնել ծնողներին, որ նրանք սովորեն պահպանել գործողությունների ճիշտ հաջորդականություն: Գոյություն ունեն երկու օգտակար մեթոդներ, որոնք կոչվում են «ուղիղ հաջորդականություն» և «հակառակ հաջորդականություն»: «Ուղիղ հաջորդականության» դեպքում մենք խրախուսում ենք երեխային կատարելու շղթայի առաջին քայլը և գործողությունն ավարտում ենք ինքներս, իսկ «հակառակ հաջորդականության» դեպքում երեխան ավարտում է գործողությունը, որը մենք էինք սկսել: Օրինակ՝ երբ ուզում եք երեխային լվացվել սովորեցնել, կարող եք օգտագործել «ուղիղ հաջորդականությունը». թող երեխան ինքը պահի ձեռքերը ուղիղ ջրի շիթի տակ, իսկ մենք բռնե՛նք նրա ձեռքերը և կատարենք մնացած գործողությունները:
- Պետք է խրախուսել ծնողներին, որ կանգ չառնեն մեկ ձեռքբերման վրա: Ծնողները երբեմն սևեռում են ուշադրությունը կոնկրետ հմտության կամ կարողության ձևավորման վրա՝ անտեսելով մի շարք այլ, ոչ պակաս

կարևորները: Երեխան ամբողջական անձ է և պետք է զարգանա որպես մեկ ամբողջություն: Հաճախ պետք է հիշեցնել ծնողներին սեփական երեխային զգալու կարևորության մասին:

Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը տեղեկացված լինելով երեխայի զարգացմանն առնչվող գիտելիքներին և հմտություններին, կարող է օգնել ծնողներին իրենց ծնողավարման գործընթացում՝ ապահովելով մանկավարժ-ծնող արդյունավետ համագործակցություն: Ծնողին օգնելով, օգնում ենք երեխային, երեխային օգնելով՝ օգնում ենք ծնողին: [Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան,Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան, Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, 2020 թ, էջ 113-124]:

Գլուխ 2. Հետազոտության ընթացք

Սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ իրականացվող աշխատանքի ընթացքում հիմնականում կազմակերպվում են ծնողական ժողովներ, որոնց ընթացքում ծնողների մեծ մասը, զբաղվածության պատճառով հնարավորություն չեն ունենում մասնակցել: Այդպիսի հանդիպումները կարճատև են և հաճախ ծնողների հետ հետադարձ կապի հնարավորություն չի լինում:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են «բաց դռների» օրեր, որոնց մասնակցել են հիմնականում նույն ծնողները:

Ավելի շատ ծնողների մասնակից դարձնելու համար՝ հետազոտական աշխատանքի շրջանակներում կազմվեց Էլեկտրոնային անանուն հարցում:

Հետազոտության շրջանակներում ընդգրկվել են այն ծնողները, որոնց երեխաները սկսել են հաճախել մանկապարտեզ 2022-2023 ուսումնական տարվա սկզբից:

Էլեկտրոնային հարցումը կազմվել է՝

- մանկապարտեզի գործունեության վերաբերյալ ծնողների կարծիքը, մոտեցումը հասկանալու համար,
- պարզելու, թե արդյո՞ք հնարավոր է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով մեծացնել ծնողների ներգրավվածության աստիճանը,
- արդյունավետության դեպքում՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառել՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում ծնողների հետ համագործակցության համար:

Էլեկտրոնային հարցման հղումը տրամադրվել է 30 ծնողի: Պատասխանել են 29 ծնող՝ կրկին անգամ համոզվելուց հետո, որ գաղտնիությունն ապահովված է:

Հարցումը բաղկացած է եղել 14 հարցից, որոնցից 8 հարցն ունեին ընտրողական պատասխան, իսկ 6-ը՝ շարադրանք:

Հարցման ընթացքում ծնողներին տրվել են հետևալ հարցերը.

1. Դուք գո՞հ եք մանկապարտեզի աշխատանքից:
2. Ինչպե՞ս է ձեր երեխան հաճախում մանկապարտեզ:

3. Ձեր կարծիքով, մանկապարտեզի աշխատանքն ավելի լավը դարձնելու համար ի՞նչ է պետք անել, ի՞նչ մտքեր կառաջարկեք:
4. Ձեր կարծիքով, մանկապարտեզի աշխատակիցն ինչպիսի՞ն պետք է լինի / ի՞նչ պետք է անի/, որ երեխան հաճույքով հաճախի մանկապարտեզ:
5. Ինչպե՞ս եք փորձում լուծել մանկապարտեզում նկատված խնդիրը:
6. Մանկապարտեզի աշխատակիցները բավարար չափով տեղեկություն տրամադրո՞ւմ են ձեզ՝ մանկապարտեզի առօրյայի վերաբերյալ:
7. Ձեր երեխայի դաստիարակի բնավորության կամ վերաբերմունքի ո՞ր գիծը կփոխեիք:
8. Ինչպե՞ս կգնահատեք ձեր երեխայի խմբի դայակի աշխատանքը:
9. Ի՞նչը կփոխեիք մանկապարտեզի աշխատանքում:
10. Ինչպիսի՞ մասնագետներ են աշխատում մանկապարտեզում:
11. Գիտե՞ք, թե ի՞նչ է «Բաց դռներ»-ի օրը:
12. Ամենից շատ կցանկանայի մանկապարտեզում փոխել ...
13. Մանկապարտեզի ո՞ր աշխատակցի կամ աշխատակիցների աշխատանքն է Ձեզ դուր գալիս և ի՞նչու:
14. Մանկապարտեզում, ըստ Ձեզ, պահպանվո՞ւմ են սանիտարահիգիենիկ պայմանները/ մաքրությունը/:

Ծնողների համար կազմված էլէկտրոնային հարցման հարցերին ծանոթացել են տնօրենը, մեթոդիստը և 1 դաստիարակ: Հարցերն ընտրվել են համատեղ քննարկման արդյունքում:

Ըստ դիտարկման խմբի անդամների կարծիքի՝

- ավանդական ծնողական ժողովների ընթացքում ծնողների մասնակցության թիվը և արդյունավետությունը բավականին ցածր է,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ճշգրիտ օգտագործումը կարող է ապահովել արդյունավետություն, քանի որ ծնողների մեծ մասը, անկախ զբաղվածությունից, օգտվում են համացանցից և սոցիալական ցանցերից,
- հետազոտական աշխատանքի թեման անչափ կարևոր է նախադպրոցական կրթության բնագավառում, որովհետև համացանցը բազում

հնարավորություններ է ընձեռնում մանկավարժին՝ կազմակերպելու սաների ուսումնադաստիարակչական աշխատանքները,

- ծնողներն ավելի անկաշկանդ կարող են արտահայտել իրենց կարծիքը, տեղեկացված լինել կրթական գործընթացի առանձնահատկություններին:

Էլեկտրոնային հարցում՝https://forms.gle/jmpto9vF86F6WaaAA

Եզրակացություն

Այսպիսով հետազոտական աշխատանքի վարկածը հաստատվեց՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս բարձրացնել սաների կրթական աշխատանքների կազմակերպման հարցում ծնողների մասնակցության մակարդակը,
- տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսումնասիրվող նյութը մատուցել ավելի հետաքրքիր տարբերակով:
- մանկավարժը, տիրապետելով տարբեր առցանց կրթական գործիքների, կարող է մանկապարտեզում ուսումնասիրված նյութի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ, հետաքրքիր տեսանյութեր, խաղ- վարժանքներ ստեղծել և տրամադրել ծնողներին,
- մանկավարժը կարող է ծնողների շրջանում անհրաժեշտ գիտամանկավարժական, հոգեբանական գիտելիքների, մեթոդների տարածման համար օգտագործել սոցիալական ցանցերը: Համապատասխան նյութը կամ նյութի հղումը կարելի է տեղադրել կամ ՆՈՒՀ-ի պաշտոնական էջում կամ այն սոցիալական ցանցում, որտեղ որ ընդգրկված են բոլոր ծնողները:

Երեխաները մեր ապագան են, ուստի յուրաքանչյուր երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելիս՝ անհրաժեշտ է ցուցաբերել բարեխիղճ, պատասխանատու, հոգատար և գիտակից վերաբերմունք: Յուրաքանչյուր երեխա առանձնահատուկ է և մանկավարժի կոչումն է ուսումնասիրել, բացահայտել երեխայի ուժեղ և թույլ կողմերը և հենվելով ուժեղ կողմերի վրա՝ արդյունավետ կառուցել երեխայի զարգաման, ուսուցման և դաստիարակության գործընթացը:

Գրականության ցանկ

1. Բարդ իրավիճակների պարզ լուծումներ / Ա. Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան,Ա. Մանուկյան, Մ. Մարության, Ս. Պետրոսյան,- Եր.: ԷՅԷՄ, 2020 թ, 132 էջ
2. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, - Եր.: 2010, 224 էջ]
3. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն,125 էջ